ք. Երևան, Ս. Դավթի 87ա **<<12>> մայիսի 2021թ**

<Վ.Մ.Կ.Ս.> **ՍՊԸ, ՀՎՀՀ՝ 03531904**
Տնօրեն՝ Մկրտիչ Կարապետյան
Հասցե՝ ք. Երևան, Բարեկամության 3/32

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Հայտնում ենք Ձեզ, որ ըստ հարկային մարմնում առկա անձնական հաշվի քարտի տվյալների Դուք 12.05.2021 թվականի դրությամբ ունեք 53.000 դրամ չկատարված դրոշմանիշային վճարի պարտավորություն: Համաձայն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <բ> կետի, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում հարուցվել է վարչական վարույթ՝ չկատարված դրոշմանիշային վճարի պարտավորությունը գանձելու վերաբերյալ ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վարչական ակտ ընդունելու նպատակով:

Ի կատարումն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 35-րդ և 38-րդ հոդվածներով վարչական մարմնին վերապահված պարտականությունների, առաջարկում ենք սույն ծանուցումը ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 3-րդ օրը, ժամը 11-ին ներկայանալ վարչական վարույթի լսումներին, կամ մինչև նույն ժամկետը ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ Ձեր գրավոր բացատրությունը և (կամ) առարկությունը հետևյալ հասցեով՝ ք. Երևան Ս. Դավթի 87ա:

Չներկայանալու դեպքում գործը կարող է քննվել Ձեր բացակայությամբ:

ՀՀ ՊԵԿ ԻՎ հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Գալստյան _____

Հեռ. 011-54-91-91 /ներքին՝ 91-95/

Digitally signed by GALSTYAN ARTAK
3601850605
Date: 2021.05.12 15:55:49 AMST